ԲԱՑ ԿԱՆՉ.

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԳԵՏ

GOETHE INSTITUT

Sprache. Kultur. Deutschland.

ԲԱՑ ԿԱՆՉ: ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏ

Գյոթե ինստիտուտը ծառայությունների մատուցման հիմունքներով փնտրում է հաղորդակցության և մշակույթի ոլորտի փորձագետի: Նպատակը ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Մշակութային և երիտասարդական նախաձեռնություններ» նախագծի, ինչպես նաև EUNIC հայաստանյան կլաստերի շրջանակում իրականացվող նախագծերի մասնագիտական աջակցությունն ու տեսանելիության ապահովումն է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- EUNIC հայաստանյան կլաստերի շրջանակում ընթացիկ մշակութային աշխատանքների աջակցություն
- Միջոցառումների կազմակերպման աջակցություն (ներառյալ հաղորդակցություն և վարչարարություն)
- EUNIC-ի անդամների կանոնավոր հանդիպումների կազմակերպում (ներառյալ արձանագրություններ, փաստաթղթավորում և քարտուղարական գործառույթներ)
- Մամուլի հաղորդագրությունների, հոդվածների և խմբագրական նյութերի պատրաստում և տարածում
- Մեդիա կապերի պահպանում և ընդլայնում (տեղական, տարածաշրջանային և միջազգային)
- Աջակցություն սոցիալական մեդիայի գործունեության և բովանդակության ստեղծման հարցում
- Հաղորդակցական գործունեության մոնիթորինգ և գնահատում

ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Հաղորդակցության և հանրային կապերի ոլորտում աշխատանքային փորձ, ցանկալի է՝ մշակութային կամ միջազգային նախագծերի շրջանակում
- Մշակութային ոլորտի գիտելիքներ և աշխատանքային փորձ այդ դաշտում
- Անգլերենի և հայերենի գերազանց իմացություն գրավոր և բանավոր մակարդակով: Գերմաներենի իմացությունը կդիտարկվի որպես առավելություն:
- ԵՄ նախագծերի և/կամ EUNIC-ի կառույցների մասին որոշակի գիտելիքները ցանկալի են
- Ստեղծագործականություն, նախաձեռնողականություն, ռազմավարական մտածողություն
- Հուսալի և ինքնուրույն աշխատելառճ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Ժամավճարի հիմունքով ծառայությունների մատուցման պայմանագիր (ոչ աշխատանքային պայմանագիր)
- Վայրը՝ Երևան
- Պայմանագրի մեկնարկը՝ հնարավորինս շուտ՝ ընտրության գործընթացի ավարտից անմիջապե հետո:
- Տևողությունը՝ մինչև 2026թ. դեկտեմբեր

- Ծավալը՝ ըստ նախապես ձեռք բերված պայմանավորվածության՝ ժամավճարի սկզբունքով

ԴԻՄՈՒՄՆԵՐ

Հետաքրքրվողները կարող են ուղարկել իրենց դիմումները (ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ) մինչև 06.02.2026թ.։
Խնդրում ենք դիմումներն ուղարկել բացառապես հետևյալ էլ. հասցեով՝
hasmik.muradyan@goethe.de

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԱՆՁ

Հասմիկ Մուրադյան
Գյոթե ինստիտուտի վարչական մարմնի ղեկավար
Էլ. փոստ՝ hasmik.muradyan@goethe.de
Հեռ. +374 60 50 47 11